ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՀՐԱՄԱՆԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻՆ ՀԱՄԱՁԳԵՍՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԱՅՆ ԿՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն	
Համար	N 5-Ն
Տիպ	Հրաման
Ակտի տիպ	Հիմնական ակտ (25.07.2003-27.12.2007)
Կարգավիճակ	Չի գործում
Սկզբնաղբյուր	ՀՀՊՏ 2003.07.15/18(136) Հոդ.278
Ընդունող մարմին	Ոստիկանության պետ
Ընդունման ամսաթիվ	15.04.2003
Ստորագրող մարմին	Ոստիկանության պետ
Ստորագրման ամսաթիվ	15.04.2003
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	25.07.2003
Ուժը կորցնելու ամսաթիվ	25.07.2011

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
4 հուլիսի 2003 թ.
Պետական գրանցման թիվ 11203213

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ

15 ապրիլի 2003 թ. N 5-Ն
ք. Երևան

Հ Ր Ա Մ Ա Ն

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻՆ ՀԱՄԱԶԳԵՍՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԱՅՆ ԿՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27 հոդվածի 2-րդ մասի և «Ոստիկանության ծառայողի համազգեստի նկարագիրը և այն կրելու ժամկետները սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թ. հոկտեմբերի 31-ի թիվ 1753-Ն որոշման 2-րդ կետի պահանջների.

Հրամայում եմ՝

1. Սահմանել.
ա) Ոստիկանության ծառայողին համազգեստ տրամադրելու և այն կրելու կարգն ու պայմանները՝ համաձայն թիվ 1 և 2 հավելվածների:
բ) Հատուկ հանձնարարություններ կատարող և հատուկ կլիմայական պայմաններում ծառայություն իրականացնող ոստիկանության ծառայողների հատուկ համազգեստը և կրման նորմաները, ոստիկանության ծառայողի անկողնային պարագաների նորմաները, ինչպես նաև ոստիկանության բարձրագույն, գլխավոր խմբերի պաշտոններ զբաղեցնող, ոստիկանության զորքերի բարձրագույն և ավագ հրամանատարական կազմի ծառայողների համազգեստի անհատական կարի պատվերների կարգը՝ համաձայն 3, 4, 5, 6 հավելվածների:
2. Ոստիկանության ծառայողների նոր հաստատված նմուշներով և նորմերով համազգեստի ապահովումն իրականացնել արտադրությանը զուգընթաց՝ նախորդ ձևի համազգեստի պաշարներն սպառելուց հետո:
3. Հանդերձանքով առաջնահերթ ապահովել արտաքին ծառայություն իրականացնող ոստիկանության ծառայողներին:
4. Սույն հրամանի պահանջների կատարման հսկողությունը հանձնարարել ոստիկանության պետի տեղակալներ, ոստիկանության գեներալ-մայոր Ա. Երիցյանին և ոստիկանության գեներալ-մայոր Հ. Վարյանին:

Ոստիկանության
գեներալ-լեյտենանտ **Հ. Հարությունյան**

Հավելված 1
ՀՀ ոստիկանության պետի
15 ապրիլի 2003 թ.
թիվ 5-Ն հրամանի

Կ Ա Ր Գ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻՆ ՀԱՄԱԶԳԵՍՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ԿՐԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹԵՐ

1.1. Ոստիկանության ծառայողի համազգեստ կրում են՝ ոստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ և կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող և ոստիկանության կոչումներ ունեցող ծառայողները, ոստիկանության ուսումնական հաստատությունների սովորողները (կուրսանտները, ունկնդիրները), ինչպես նաև ոստիկանությունից ազատված՝ բարձրագույն կոչում ունեցող ոստիկանության համազգեստ կրելու իրավունք ունեցող քաղաքացիները:
1.2. Ծառայության ընթացքում ոստիկանության ծառայողները կրում են իրենց շնորհված կոչմանը համապատասխան, «Ոստիկանության ծառայողի համազգեստի նկարագիրը և այն կրելու ժամկետները սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թ. հոկտեմբերի 31-ի թիվ 1753-Ն որոշմամբ հաստատված նմուշի համազգեստ, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտություն է առաջանում ծառայության ժամանակ կրելու քաղաքացիական հագուստ: Համազգեստի պարագաները պետք է համապատասխանեն սահմանված նմուշներին և նկարագրերին, լինեն հարմարեցված և պահպանվեն մաքուր ու արդուկված վիճակում:
1.3. Ոստիկանության ծառայողների համազգեստները դասակարգվում են տոնական, ամենօրյա և պարեկապահակետային, իսկ ըստ տարվա եղանակների՝ ամառային և ձմեռային տեսակների:
Համազգեստի նշված տեսակները կրում են.
Տոնական համազգեստ՝
- երդման արարողության,
- ոստիկանության ստորաբաժանումներին, ուսումնական հաստատություններին դրոշներ հանձնելու,
- պատվո պահակի կազմի մեջ ընդգրկվելու,
- պետական պարգևներ ստանալու,
- պաշտոնի նշանակման և հատուկ կոչում շնորհելու առիթներով՝ անմիջական պետին ներկայանալիս,
- ոստիկանության ծառայողների մասնակցությամբ պաշտոնական միջոցառումների անցկացման ժամանակ,
- տոների, հիշատակի և հանգստյան օրերին՝ ծառայությունից դուրս ժամանակամիջոցում:
Պարեկապահակետային համազգեստ՝
- պարեկային ծառայության մեջ գտնվելիս,
- ծառայողական հատուկ խնդիրներ կատարելիս,
- հերթապահությունների և պարապմունքների ժամանակ:
Ամենօրյա համազգեստը՝ մնացած բոլոր դեպքերում:
1.4. Սույն կարգով հաստատված հատուկ համազգեստը և կոշկեղենը ոստիկանության ծառայողները կրում են ծառայողական պարտականություններ կատարելիս, հատուկ պայմաններում, ինչպես նաև տեխնիկան և ծառայողական կենդանիներին սպասարկելիս:
1.5. Համազգեստի տեսակը, ելնելով կատարվող խնդիրների բնույթից և պայմաններից, ինչպես նաև անցումը ամառային և ձմեռային հագուստի, սահմանվում է ոստիկանության ստորաբաժանման օպերատիվ ղեկավարի կողմից՝ ըստ նրանց տեղակայման վայրի:
1.6. Շարային երթի, ստուգատեսների, ժողովների, խորհրդակցությունների և պարապմունքների ժամանակ ծառայողների համազգեստի տեսակը սահմանվում է այն անցկացնողների կողմից:
1.7. Ոստիկանության ծառայողների առանձին խմբեր զինվորական նմուշի դաշտային համազգեստ կրելիս ղեկավարվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից տվյալ համազգեստը կրելու համար սահմանված կարգով և նորմաներով:
1.8. Կրման համար ենթակա չեն.
- չսահմանված նմուշի համազգեստի պարագաներ, տարբերանշաններ և կրծքանշաններ.
- միաժամանակ ամենօրյա, տոնական և պարեկապահակետային ծառայության համազգեստների պարագաները, բացառությամբ սույն կանոններով նախատեսված հատուկ դեպքերի.
- գունաթափ և չարդուկած համազգեստ, դեֆորմացված ու կեղտոտված ուսադիրներ.
- գունաթափ և կեղտոտված փողկապներ.
- կեղտոտ, վնասված վերնամասով, մաշված կրունկներով կամ ոլորված սրնքակալներով կոշիկներ.
-գունաթափ կիսագուլպաներ.
-ոստիկանության և զինվորական համազգեստը քաղաքացիական հագուստի հետ համատեղ:

2. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

2.1. Ոստիկանության ծառայողները կրում են՝
Տոնական համազգեստ.
Ամառային - գլխարկ, կիտել և տաբատ՝ մուգ մոխրագույն (բարձրագույն խմբի կոչում ունեցողների համար համապատասխանաբար պողպատագույն գլխարկ և կիտել, մուգ կապույտ տաբատ), վերնաշապիկ՝ սպիտակ, սև փողկապով, սև կոշիկներ:
Ձմեռային - ականջակալներով, մուգ մոխրագույն մորթե (բարձրագույն խմբի կոչումներ ունեցողների և գնդապետների համար՝ կարակուլե) գլխարկ, մոխրագույն մորթե (բարձրագույն խմբի կոչումներ ունեցողների և գնդապետների համար՝ կարակուլե) օձիքով

վերարկու, կիսավերարկու՝ մորթե օձիքով, կիտել և տաբատ մուգ մոխրագույն (բարձրագույն խմբի կոչում ունեցողների համար համապատասխանաբար պողպատագույն գլխարկ և կիտել, մուգ կապույտ տաբատ), սպիտակ վերնաշապիկ, սև փողկապ, սև կոշիկներ կամ կիսաճտքավոր կոշիկներ, սև ձեռնոցներ, կաշնե՝ սպիտակ:

2.1.2. Ամենօրյա համազգեստ.

Ամառային - գլխարկ, մուգ մոխրագույն կիտել և տաբատ, վերնաշապիկ մոխրագույն- երկնագույն (սպիտակ), մուգ մոխրագույն փողկապ, սև կոշիկներ կամ կիսաճտքավոր կոշիկներ:

Ձմեռային - ականջակալներով մուգ մոխրագույն մորթե (բարձրագույն խմբի կոչումներ ունեցողների և գնդապետների համար՝ կարակուլե) գլխարկ, մոխրագույն մորթե (բարձրագույն խմբի կոչումներ ունեցողների և գնդապետների համար՝ կարակուլե) օձիքով վերարկու, կիսավերարկու՝ մորթե օձիքով, մուգ մոխրագույն կիտել և տաբատ, մոխրագույն-երկնագույն (սպիտակ) վերնաշապիկ, մուգ մոխրագույն փողկապով, սև կոշիկներ կամ կիսաճտքավոր կոշիկներ, սև ձեռնոցներ, մոխրագույն կաշնե:

2.1.3. Պարեկապահակետային համազգեստ.

Ամառային - գլխարկ (ոստիկանության հատուկ նշանակության ստորաբաժանումներում՝ պիլոտկա կամ բերետ), սինթետիկ, մուգ մոխրագույն բաճկոն և տաբատ, ճանապարհապարեկային ծառայողների համար երկուական լուսանդրադարձնող ժապավեններ, մոխրագույն - երկնագույն վերնաշապիկ (մայկա), մուգ մոխրագույն փողկապ, սև (սպիտակ) կաշվե գոտի, սև կոշիկներ կամ կիսաճտքավոր կոշիկներ:

Ձմեռային - գլխարկ ականջակալներով, ոչխարի մուգ մոխրագույն մորթուց (գլխավոր, ավագ խմբի կոչումներ ունեցողներին) և մուգ մոխրագույն արհեստական մորթուց (կրտսեր խմբի կոչումներ ունեցողներին), մորթե օձիքով կիսավերարկու, ճանապարհապարեկային ծառայողների համար երկուական լուսանդրադարձնող ժապավեններ, մոխրագույն կիտել և տաբատ, մոխրագույն - երկնագույն վերնաշապիկ, սև (սպիտակ) գույնի կաշվե գոտի, սև կոշիկներ կամ կիսաճտքավոր կոշիկներ, սև ձեռնոցներ, մուգ մոխրագույն կաշնե:

2.1.4. Ոստիկանության ծառայողները կարող են կրել՝

Ձմեռային, ամենօրյա և տոնական համազգեստների հետ ականջակալներով գլխարկի փոխարեն՝ մուգ մոխրագույն բրդյա գլխարկ.

պարեկապահակետային ձմեռային համազգեստի դեպքում՝ ականջակալներով, արհեստական մորթուց գլխարկի փոխարեն բրդյա գլխարկ, մորթե օձիքը հանված կիսավերակուի հետ.

ամառային ամենօրյա համազգեստի դեպքում՝ մուգ մոխրագույն բրդյա պիլոտկա, մոխրագույն- երկնագույն (սպիտակ) վերնաշապիկի հետ առանց կիտելի.

ձմեռային ամենօրյա և տոնական համազգեստների դեպքում՝ ձմեռային վերարկուի կամ կիսավերարկուի փոխարեն՝ գարնանային - աշնանային մուգ մոխրագույն վերարկու.

ձմեռային ամենօրյա համազգեստի դեպքում՝ ձմեռային մուգ մոխրագույն կիսավերարկու, մոխրագույն կաշնեի հետ.

ամառային ամենօրյա համազգեստի դեպքում՝ կիտելի փոխարեն բրդյա մուգ մոխրագույն բաճկոն (գլխարկի կամ պիլոտկայի հետ).

ամառային ամենօրյա առանց կիտելի համազգեստի դեպքում՝ սպիտակ և մոխրագույն - երկնագույն վերնաշապիկ (երկար թևքերովը՝ փողկապով, կարճ թևքերովը՝ առանց փողկապի).

պարեկապահակետային համազգեստի դեպքում՝ առանց սինթետիկ բաճկոնի սպիտակ և մոխրագույն - երկնագույն վերնաշապիկ (երկար թևքերովը՝ փողկապով, կարճ թևքերովը՝ առանց փողկապի).

անձրևային եղանակներին՝ ամենօրյա, տոնական և պարեկապահակետային համազգեստների դեպքում՝ մուգ մոխրագույն թիկնոց-ուսնոց:

2.2. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

2.2.1. Տոնական համազգեստ.

Ամառային - գլխարկ, կիսաշրջազգեստ՝ մուգ մոխրագույն, վերնաշապիկ՝ սպիտակ, սև փողկապով, սև կոշիկներ, սև կամ մուգ մոխրագույն կապրոնե զուգագուլպա (գուլպա) .

Ձմեռային - ականջակալներով, մորթե մոխրագույն (գնդապետների համար՝ կարակուլե) գլխարկ, մորթե օձիքով (գնդապետների համար՝ կարակուլե) վերարկու, կիտել, կիսաշրջազգեստ՝ մուգ մոխրագույն, վերնաշապիկ՝ սպիտակ, սև փողկապով, սև գույնի կոշիկներ կամ կիսաճտքավոր կոշիկներ, կիսաբրդյա կամ կապրոնե սև, մարմնագույն կամ մուգ մոխրագույն զուգագուլպա (գուլպա), սև ձեռնոցներ, սպիտակ կաշնե.

2.2.2. Ամենօրյա համազգեստ.

Ամառային - գլխարկ, կիսաշրջազգեստ՝ մուգ մոխրագույն, վերնաշապիկ՝ մոխրագույն, երկնագույն (սպիտակ), մուգ մոխրագույն փողկապ, սև կոշիկներ, սև կամ մոխրագույն կապրոնե զուգագուլպա.

Ձմեռային - ականջակալներով, մոխրագույն մորթե (գնդապետների համար՝ կարակուլե) գլխարկ, մոխրագույն մորթե օձիքով (գնդապետների համար՝ կարակուլե) վերարկու, մուգ մոխրագույն կիտել, կիսաշրջազգեստ, վերանաշապիկ՝ մոխրագույն, երկնագույն (սպիտակ), մուգ մոխրագույն փողկապ, սև գույնի կոշիկներ կամ կիսաճտքավոր կոշիկներ, կիսաբրդյա, կապրոնե սև, մարմնագույն կամ մոխրագույն զուգագուլպա (գուլպա), սև ձեռնոցներ, մոխրագույն կաշնե:

2.2.3.Պարեկապահակետային համազգեստ.

Ամառային - սինթետիկ մուգ մոխրագույն գլխարկ, բաճկոն, տաբատ, մոխրագույն - երկնագույն վերնաշապիկ (մայկա), մուգ մոխրագույն փողկապ, սև կաշվե գոտի, սև կիսաճտքավոր կոշիկ:

Ձմեռային - մոխրագույն մորթուց ականջակալներով գլխարկ (գնդապետների համար՝ կարակուլե), մուգ մոխրագույն կիսավերարկու և սինթետիկ տաբատ, մոխրագույն-երկնագույն վերնաշապիկ (մայկա)՝ մուգ մոխրագույն փողկապով, սև կաշվե գոտի, սև կոշիկներ կամ կիսաճտքավոր կոշիկներ, սև ձեռնոցներ, մոխրագույն կաշնե:

2.2.4. Ոստիկանության կին ծառայողները կարող են կրել.

ձմեռային ամենօրյա և տոնական ձևի համազգեստի դեպքում՝ ականջակալներով գլխարկի փոխարեն՝ բրդյա գլխարկ.

պարեկապահակետային ձմեռային համազգեստի դեպքում՝ ականջակալներով արհեստական մորթուց գլխարկի փոխարեն՝ սինթետիկ գլխարկ, մորթե օձիքը հանված կիսավերարկուի հետ.

ամառային ամենօրյա համազգեստի դեպքում՝ մուգ մոխրագույն բրդյա պիլոտկա, մոխրագույն - երկնագույն վերնաշապիկի հետ.

տարվա բոլոր եղանակներին՝ մորթե օձիքը հանված վերարկու, կիսավերարկու.

ամառային ամենօրյա և տոնական համազգեստի դեպքում, ինչպես նաև գարնանը՝ մինչև համազգեստի ամառային ձևին անցնելը և աշնանը՝ համազգեստների ձմեռային ձևին անցնելը՝ գարնանային-աշնանային մուգ մոխրագույն վերարկու, մոխրագույն (սպիտակ) կաշնե.

ամառային ամենօրյա համազգեստի դեպքում՝ սինթետիկ մուգ մոխրագույն բրդյա բաճկոն, գլխարկով կամ պիլոտկայով.

ամառային ամենօրյա համազգեստի դեպքում՝ սպիտակ, մոխրագույն - երկնագույն վերնաշապիկ (երկար թևքերովը՝ փողկապով, կարճ թևքերովը՝ առանց փողկապի)՝.

պարեկապահակետային համազգեստի դեպքում՝ առանց սինթետիկ բաճկոնի, սպիտակ, մոխրագույն-երկնագույն վերնաշապիկ (երկար թևքերովը՝ փողկապով, կարճ թևքերովը՝ առանց փողկապի).

ամառային ամենօրյա պարեկապահակետային համազգեստի դեպքում՝ գարնանային-աշնանային մուգ մոխրագույն վերարկու.

անձրևային եղանակներին՝ մուգ մոխրագույն թիկնոց-ուսնոց.

ամենօրյա համազգեստի դեպքում՝ մուգ մոխրագույն բրդյա տաբատ:

3. ՀԱՄԱԶԳԵՍՏԻ, ԿՈՇԻԿԻ ԵՎ ՀԱՆԴԵՐՁԱՆՋԻ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ ԿՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Ականջակալներով գլխարկը, ամենօրյա գլխարկները կրում են ուղիղ, առանց թեքելու, իսկ պիլոտկան, բերետը և կանացի գլխարկը՝ փոքր-ինչ թեք՝ դեպի աջ կողմը, ընդ որում, գլխարկի հովիարը պետք է գտնվի հոնքերի մակարդակին, իսկ ականջակալներով գլխարկի, բերետի ներքևի եզրը պետք է լինի 2-4 սմ հոնքերից վերև:

Բարձրագույն խմբի կոչում ունեցող ծառայողները կրում են ոսկեզօծ թելերով ասեղնագործված դափնեճյուղերով, փոքր գլխարկանշանով և զինանշանով բրդյա գլխարկ: Գնդապետները կրում են ոսկեգույն փոքր գլխարկա-նշանով և զինանշանով բրդյա գլխարկ, ոստիկանության մյուս ծառայողները՝ ոսկեգույն մեծ գլխարկանշանով գլխարկ:

Բարձրագույն խմբի կոչում ունեցող ծառայողները և գնդապետները ականջակալներով գլխարկը կրում են ոսկեգույն փոքր գլխարկանշանով, իսկ ոստիկանության մյուս ծառայողները՝ ոսկեգույն մեծ գլխարկանշանով:

Ոստիկանության ծառայողները պիլոտկան և բերետը կրում են ոսկեգույն փոքր գլխարկանշանով:

Գլխարկանշանի կենտրոնը՝ գլխարկանշանի և խորհրդանշանի միջնագիծը պետք է գտնվեն քթարմատի վերևում:

Ականջակալներն իջեցրած ականջակալներով գլխարկ կրում են օդի -10ºC և ավելի ցածր ջերմաստիճանների դեպքում՝ կոճկված դնչափոկով՝ ուժեղ քամու դեպքում: Իջեցված ականջակալների քուղերը կապվում են կզակի տակ, բարձրացված ականջակալների դեպքում իրար կապված քուղերի ծայրերը պահվում են ականջակալների տակ:

Գլխից հանված գլխարկը պահում են ձախ իջեցրած ազատ ձեռքում, ականջակալներով գլխարկը, բերետը պահում են գլխարկանշանով դեպի առաջ, ականջակալներով գլխարկի, բերետի ներքևի ծայրը՝ ուղղված դեպի աշխատակցի ոտքի կողմը, իսկ պիլոտկայինը՝ դեպի ներքև:

3.2. Ձմեռային վերարկուն կրում են բոլոր կոճակները կոճկված, մորթե օձիքով կամ առանց դրա:
Հեռավորությունը գետնից մինչև տղամարդու ձմեռային վերարկուի ներքևի փեշը պետք է լինի 40 սմ, կանացի վերարկուինը՝ 38-42 սմ:
3.3. Մորթե օձիքով ձմեռային կիսավերարկուն կրում են կափույրով ծածկվող շղթան մինչև վերջ բարձրացված:
3.4. Կանացի գարնանային - աշնանային վերարկուն կրում են բոլոր կոճակները կոճկված, վերարկուի գոտին ճարմանդով կոճկված:
Հեռավորությունը գետնից մինչև վերարկուի ներքևի փեշը՝ 42-45 սմ:
3.5. Գարնանային-աշնանային տաք ներդիրով վերարկուն կրում են բոլոր կոճակները կոճկված, գոտին ճարմանդով կոճկված:
Հեռավորությունը գետնից մինչև վերարկուի ներքևի փեշը՝ 42-45 սմ: Գարնանային - աշնանային վերարկուն ձեռքով տեղափոխվում է երեսով դեպի դուրս խնամքով ծալված՝ ձախ ձեռքում:
3.7. Թիկնոց-ուսնոցը անձրևային եղանակին կրում են բոլոր կոճակները կոճկված, գլխանոցով կամ առանց դրա՝ ամառային կամ ձմեռային հագուստի պարագաների վրայից: Թիկնոց - ուսնոցը թույլատրվում է կրել ուսագոտու վրա գլանափաթեթավորված կամ երեսով դեպի դուրս խնամքով ծալված՝ ձախ ձեռքում:
3.8. Կիտելը կրում են բոլոր կոճակները կոճկված:
3.9. Բրդյա բաճկոնը կրում են շղթան մինչև վերին կտրվածքը բարձրացված: Ցուրտ եղանակին շղթան բարձրացվում է մինչև վերջ:
3.10. Բրդյա և սինթետիկ տաբատը կրում են կիսաճտքավոր կոշիկների մեջ ոչ ձիգ վիճակում տեղավորված կամ կոշիկների վրա բաց թողնված:
3.11. Ամառային սինթետիկ բաճկոնը կրում են բոլոր կոճակները կոճկված: Ուսումնական հաստատությունների սովորողները (կուրսանտներ, ունկնդիրներ) բաճկոնը կրում են սպիտակ ենթաօձիքով:
3.12. Երկարաթևք վերնաշապիկները կրում են բոլոր կոճակները կոճկված, ուսադիրներով և փողկապով, իսկ կարճաթևք վերնաշապիկները՝ առանց փողկապի, ուսադիրներով, վերևի կոճակը արձակված: Վերնաշապիկի օձիքը հետևից պետք է լինի կիտելի օձիքի վերին ծայրին հավասար կամ նրանից բարձր, ոչ ավելի, քան 0,5 սմ:
3.13. Տաբատները պետք է ունենան երկայնակի արդուկված ծալքեր:
Վերարկուի, կիտելի, բաճկոնների և վերնաշապիկի գրպանների կափույրները պետք է լինեն դուրս հանված:
3.16. Կաշնեն կրում են վերարկուի, ձմեռային կիսավերարկուի, գարնանային-աշնանային վերարկուի օձիքի տակ՝ խնամքով ծալված: Կաշնեի վերին եզրը պետք է հավասարաչափ երևա օձիքի տակից 1-2 սմ:
3.17. Ձեռնոցները կրում են ձմեռային հագուստի հետ: Պատիվ տալուց ձեռնոցները չեն հանում:
3.18. Ուստիկանության ծառայողները կրում են սահմանված նմուշի սև կոշիկներ և կիսաճտքավոր կոշիկներ: Վերջիններս կրում են խնամքով քուղակապված վիճակում:
3.19. Ուստիկանության կին ծառայողները կրում են սև, մարմնագույն կամ մուգ մոխրագույն կիսագուլպաներ, զուգագուլպաներ, գուլպաներ:
3.20. Կաշվե գոտին կրում են այնպես, որ նրա ճարմանդը առջևից գտնվի մեջտեղում:
3.21. Պայուսակ-պլանշետը կրում են հագուստի պարագաների վրայով աջ ուսին հագցվող գոտու վրա:
3.22. Փողկապը ամրացնում են վերնաշապիկին սահմանված նմուշի ոսկեգույն ամրակով՝ վերևից երրորդ և չորրորդ կոճակների միջև:
3.23. Ուստիկանության ծառայողները կարող են կրել.
առանց կիտելի (բաճկոնի) ուսադիրներով և փողկապով վերնաշապիկներ՝ ամառային ամենօրյա համազգեստի դեպքում, իսկ շենքերի ներսում՝ տարվա ցանկացած եղանակին.
առանց կիտելի (բաճկոնի), առանց փողկապի, ուսադիրներով, վերին կոճակը արձակված կարճ թևքերով վերնաշապիկները՝ ամառային ամենօրյա հագուստի հետ օդի +20°C և ավելի բարձր ջերմաստիճանների դեպքում:

4. ՈՒՍԱԴԻՐՆԵՐ, ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐ, ԿՐԾՔԱՆՇԱՆՆԵՐ ԵՎ ԹԵՎՔԱՆՇԱՆՆԵՐ ԿՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1. Ուստիկանության ծառայողի համազգեստի և հատուկ հագուստի վրա կրում են ուսադիրներ.
կարովի՝ ձմեռային վերարկուի, կիտելի, բաճկոնի վրա,
հանովի՝ լայնեցրած գոտեմակողով՝ գարնանային-աշնանային վերարկուի և վերնաշապիկի վրա:
4.2. Կարովի և հանովի ուսադիրների վրա ուսադրի վերին ծայրից 15 մմ հեռավորության վրա տեղադրվում է ոսկեգույն կոճակ, իսկ գործվածքի երեսի կտորից կարված ուսադիրներին 10 մմ հեռավորության վրա՝ կոճգամ (ոսկեգույն կոճակ):
4.3.Ուստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ և կրտսեր խմբի կոչումներ ունեցող ծառայողների ուսադիրների վրա աստղերը տեղադրվում են հետևյալ կարգով.

Կոչում	Աստղերի թիվը ուսադրի վրա	Աստղերի տրամագիծը (մմ)	Հեռավորությունը ուսադրի ներքին ծայրից մինչև առաջին աստղի կենտրոնը (մմ)	Հեռավորությունը աստղերի կենտրոնների միջև ուսադրի երկայնքով (մմ)
Գեներալ-գնդապետ	3	22	25	25
Գեներալ-լեյտենանտ	2	22	25	25
Գեներալ-մայոր	1	22	50	-
Գնդապետ	3	20	30	25
Փոխգնդապետ	2	20	30	-
Մայոր	1	20	45	-
Կապիտան	4	13	30	25
Ավագ լեյտենանտ	3	13	30	25
Լեյտենանտ	2	13	30	-
Կրտսեր լեյտենանտ	1	13	45	-
Ավագ ենթասպա	3	13	30	25
Ենթասպա	2	13	30	25

Ուստիկանության ուսումնական հաստատությունների սովորողների (ունկնդիրներ, կուրսանտներ) համազգեստի ուսադիրների վրա (բացի ենթասպա, ավագ ենթասպա և ավագ կոչում ունեցող ունկնդիրների և կուրսանտների) ուսադիրի ներքևի ծայրից 15 մմ հեռավորության վրա տեղադրվում է ոսկեգույն «ՈՒ» (Կ) տառը: Ուստիկանության ակադեմիայի սովորողները ուսադիրների վրա կրում են «ՈՒ» տառը, իսկ ուստիկանությունում պաշտոնի նշանակման համար եռամյա փորձաշրջան և վերապատրաստում անցնողները՝ «Կ» տառը:
4.4. Ըստ շնորհված կոչումների՝ ուսադիրների վրա աստղերը տեղադրվում են.
ա) կարովի և հանովի ուսադիրների վրա՝
գեներալների համար՝ երկայնակի առանցքային գծի վրա.
գնդապետների համար՝ երկու ներքևի աստղերը մակաշերտերի վրա, երրորդը՝ առաջին երկուսից վերև երկայնակի առանցքային գծի վրա.
փոխգնդապետների համար՝ մակաշերտերի վրա.
մայորների համար՝ երկայնակի առանցքային գծի վրա.
կապիտանների համար՝ երկու ներքևի աստղերը՝ ուսադիրի եզրերի և մակաշերտի միջև, երրորդը և չորրորդը՝ մակաշերտի վրա առաջին երկուսից վերև.
ավագ լեյտենանտների համար՝ երկու ներքևի աստղերը՝ ուսադիրի եզրերի և մակաշերտի միջև, երրորդ աստղը՝ մակաշերտի վրա առաջին երկուսից վերև.

լեյտենանտների համար՝ մեկական աստղ ուսադրի ծայրերի և մակաշերտի միջև.
կրտսեր լեյտենանտների համար՝ մակաշերտի վրա.
ավագ ենթասպաների, ենթասպաների համար՝ երկայնակի առանցքային գծի վրա.
բ) ներկարված ուսադիրների համար (գործվածքի երեսի կտորից կարված)՝
գնդապետների, ավագ լեյտենանտների համար՝ երկու ներքևի աստղերը երկայնակի առանցքային գծի երկու կողմերում, կողքերից և առանցքային գծից հավասար հեռավորության վրա, երրորդը՝ առաջին երկուսից վերև երկայնակի առանցքային գծի վրա.
մայորների, կրտսեր լեյտենանտների, ավագ ենթասպաների, ենթասպաների համար՝ երկայնակի առանցքային գծի վրա.
կապիտանների համար՝ երկու ներքևի աստղերը երկայնակի առանցքային գծի երկու կողմերում, կողքերից և առանցքային գծից հավասար հեռավորության վրա, երրորդը և չորրորդը՝ առաջին երկուսից վերև՝ երկայնակի առանցքային գծի վրա:
4.5. Ոստիկանության կրտսեր խմբի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա (բացի ենթասպաներից) տեղադրվում են ոսկեգույն նշանաքուղեր (մետաղյա թիթեղներ)՝

Կոչումը	Նշանաքուղերի (թիթեղների) քանակը	Նշանաքուղերի (թիթեղների) լայնությունը
Ավագ	մեկ երկայնակի	20 մմ
Ավագ սերժանտ	մեկ լայնակի	20 մմ
Սերժանտ	երեք լայնակի	10 մմ
Կրտսեր սերժանտ	երկու լայնակի	10 մմ

4.6. Նշանաքուղերը (մետաղյա թիթեղները) տեղադրվում են հետևյալ կարգով. ավագ սերժանտի, սերժանտի, կրտսեր սերժանտի ուսադիրների վրա՝ 40 մմ հեռավորության վրա ներքևի ծայրից մինչև առաջին լայնակի նշանաքուղը (մետաղյա թիթեղը): Հաջորդ լայնակի նշանաքուղերը (մետաղյա թիթեղները) սերժանտների և կրտսեր սերժանտների ուսադիրների վրա տեղադրվում են առաջինից 2 մմ հեռավորությամբ, ավագների ուսադիրների մեջտեղում տեղադրվում է երկայնակի ոսկեգույն շերտագիծ, իսկ ավագների ներկարված ուսադրի մեջտեղում տեղադրվում է մետաղյա թիթեղ 45 մմ երկարությամբ՝ ուսադրի ներքևի ծայրից 10 մմ հեռավորության վրա:
4.7. Մետաղյա խորհրդանշանները ամրացվում են կիտելների, գարնանային-աշնանային և ձմեռային (առանց մորթե օձիքի) վերարկուների օձիքի վրա, օձիքի անկյան կիսորդի ուղղությամբ 30 մմ հեռավորության վրա, ձմեռային և գարնանային-աշնանային վերարկուների վրա (բացի բարձրագույն խմբի կոչում ունեցողների) 35 մմ հեռավորության վրա օձիքի անկյունից մինչև խորհրդանշանի կենտրոնը, ընդ որում խորհրդանշանի համաչափության ուղղահայաց առանցքը պետք է զուգահեռ լինի օձիքի կիսանջատ հատվածին:
Գնդապետների համազգեստի վրա տեղադրվում է նույն խորհրդանշանը եռագույն դրոշի պատկերով:
4.8. Ոստիկանության բարձրագույն խմբի կոչումներ ունեցող ծառայողների ձմեռային վերարկուի և գարնանային-աշնանային վերարկուի օձիքների անկյուններում ամրացվում են ոսկեզօծ տարբերանշաններ (դափնեճյուղեր):
Ոսկեզօծ տարբերանշանները համազգեստի վրա տեղադրվում են օձիքի ծայրի կիսանջատ հատվածին զուգահեռ այնպես, որ ներքևի ծայրը համընկնի օձիքի ծայրի հետ (չծածկելով օձիքի եզրաքուղը), իսկ ոսկեզօծ տարբերանշանի արտաքին կողաեզրը ձմեռային վերարկուի վրա հպվի օձիքի ներսի հարդարակարին՝ 10 մմ հեռավորության վրա օձիքի ծայրի կիսանջատ հատվածից:
Կիտելների օձիքների անկյուններում տեղադրվում են ոսկեգույն ասեղնագործված դափնեճյուղեր:

4.9. Մետաղյա խորհրդանշանները ամրացվում են կիտելների, գարնանային-աշնանային և ձմեռային (առանց մորթե օձիքի) վերարկուների օձիքի վրա, օձիքի անկյան կիսորդի ուղղությամբ 30 մմ հեռավորության վրա, ձմեռային և գարնանային-աշնանային վերարկուների վրա (բացի բարձրագույն խմբի կոչում ունեցողների) 35 մմ հեռավորության վրա օձիքի անկյունից մինչև խորհրդանշանի կենտրոնը, ընդ որում խորհրդանշանի համաչափության ուղղահայաց առանցքը պետք է զուգահեռ լինի օձիքի կիսանջատ հատվածին:
Գնդապետների համազգեստի վրա տեղադրվում է նույն խորհրդանշանը եռագույն դրոշի պատկերով:



4.10. «Պետավտոտեսչության» կրծքանշանը կրում են կրծքավանդակի ձախ կողմում: Կիտելների վրա կրծքանշանը ամրացվում է ձախ գրպանի շերտակարի վրա, եթե կիտելի և բաճկոնի վրա առկա են շքանշանների ժապավեններ և մեդալների շերտաձողիկներ՝ նշանը ամրացվում է դրանցից 10 մմ ներքև, ձմեռային կիսավերարկուի վրա՝ ուսադիրի ներքևի եզրից 90 մմ վրա և շղթայից 120 մմ դեպի ձախ:
4.11. Հայաստանի Հանրապետության ոստիկանության բոլոր ծառայողները համազգեստի ձախ թևքին ուսակարից 80 մմ ներքև կրում են Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը խորհրդանշող թևքանշան:
Ոստիկանության քննչական, կազմակերպված հանցավորության դեմ պայքարի, թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայարի, Երևան քաղաքի, տրանսպորտային, պետավտոտեսչության, պետական պահպանության վարչությունների, ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի, ակադեմիայի ծառայողները և սովորողները համազգեստի աջ թևքին ուսակարից 80 մմ ներքև կրում են իրենց ծառայությունը խորհրդանշող թևքանշան:
Ոստիկանության մարզային ստորաբաժանումների ծառայողները համազգեստի աջ թևքին ուսակարից 80 մմ ներքև կրում են իրենց մարզի անվանմամբ թևքանշան:
Ոստիկանության ոսումնական հաստատությունների սովորողները (ունկնդիրները, կուրսանտները) կրում են ուսուցման կուրսերին համապատասխան թևքատրեզներ (առաջին կուրսում՝ մեկ, երկրորդում՝ երկու, երրորդում՝ երեք, չորրորդում՝ չորս, հինգերրորդում՝ հինգ) վերնահագուստի աջ թևքի արտաքին կողմում (բացի ձմեռային կիսավերարկուից)՝ թևքանշանի ներքին կետից 5 մմ ներքև:

5. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՇՔԱՆՇԱՆՆԵՐԻ, ՄԵԴԱԼՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆՆԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շքանշանները, մեդալները, շքանշանների ժապավենները և շերտաձողիկների վրա ամրացված մեդալների ժապավենները, մյուս տարբերանշանները դասավորվում են համազգեստի վրա՝ պահպանելով հետևյալ առանձնահատկությունները.

5.1. Հայրենիքի շքանշանը (հանձնվում է միայն «Հայաստանի ազգային հերոս» բարձրագույն կոչմանն արժանացած անձանց), տեղադրվում է կրծքավանդակի ձախ կողմում՝ դարձածալից 10 մմ ձախ՝ շքանշանի շերտաձողիկի ներքևի ծայրը՝ օձիքի անկյան մակարդակին հավասար:

Պետական պարգևները տեղադրվում են հետևյալ հերթականությամբ. Հայաստանի Հանրապետության պետական պարգևներ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական պարգևներ, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության պետական պարգևներ, գերատեսչական նշանակության մեդալներ և օտար-երկրյա պարգևներ:

5.2. Տոնական կիտելի վրա շքանշանները և մեդալները կրծքավանդակի ձախ կողմում տեղաբաշխվում են հորիզոնական շարքով կրծքավանդակի կենտրոնից դեպի դուրս, կրծքավանդակի ուղղահայաց առանցքին համաչափ դարձածալի անկյունից 70 մմ ներքև, դարձածալի եզրից 10 մմ հեռավորության վրա: Եթե շքանշանները և մեդալները չեն տեղավորվում մեկ շարքի վրա, ապա տեղափոխվում են երկրորդ և հաջորդ շարքերը, առաջին շարքից ներքև:

5.3. Շքանշանները և մեդալները կրծքավանդակի աջ կողմում տեղադրվում են հորիզոնական շարքով կրծքավանդակի կենտրոնից դեպի դուրս: Առաջին շարքում չտեղավորվող շքանշանները և մեդալները տեղափոխվում են երկրորդ շարք, շարքով դասավորված շքանշանների պայմանական առանցքները պետք է լինեն միևնույն մակարդակի վրա: Հեռավորությունը շքանշանների (մեդալների) շարքերի միջև՝ 10 մմ, շքանշանների (մեդալների) միջև՝ 5-10 մմ:

Վահանակով ամրացվող շքանշանները, մեդալները և պարգևանշանները տեղադրվում են աջ կողմում:

5.4. Շքանշանների ժապավենները և մեդալների ժապավենները շերտաձողի վրա տեղադրվում են ձախ կողմում հորիզոնական շարքով կրծքավանդակի կենտրոնից դեպի դուրս, գրպանի ուղղահայաց առանցքին համաչափ: Շարքում տեղադրվում է 4 ժապավենից ոչ ավելի: Մեկ շարքում չտեղավորվող ժապավենները տեղափոխվում են երկրորդ, երրորդ և չորրորդ շարքերը: Ընդ որում, վերջին շարքի շերտաձողի ներքևի ծայրը պետք է լինի գրպանի կափույրի վերին ծայրի մակարդակին: Ավելի քան 16 շքանշանների և մեդալների դեպքում կրում են միայն առավել բարձր կարգավիճակի շքանշանների և մեդալների ժապավենները: Շքանշանների և մեդալների ժապավենների հետ միասին շերտաձողի բարձրությունը պետք է կազմի 8 մմ:

5.5. Հայաստանի Հանրապետության «Պատվավոր կոչումների» կրծքանշանները տեղադրվում են դարձածալից 10 մմ աջ այնպես, որ նշանի շերտաձողի ներքևի ծայրը լինի օձիքի անկյան մակարդակին, իսկ շքանշանների (մեդալների) առկայության դեպքում՝ նրանցից վերև:

«Ոստիկանության պատվավոր ծառայող» և «Գերազանց ծառայության համար» կրծքանշանները տեղադրվում են դարձածալից աջ՝ ուսումնական հաստատության ավարտական կրծքանշանից առաջ:

5.6. Համազգեստի վրա կրելու թույլատրված կրծքանշանները տեղադրվում են կրծքավանդակի աջ կողմում հորիզոնական մեկ շարքով կրծքավանդակի կենտրոնից դեպի դուրս գրպանի ուղղահայաց առանցքին համաչափ: Մյուս կրծքանշանները տեղադրվում են գրպանի վրա, գրպանի և կափույրի ներքևի ծայրից հավասար հեռավորության վրա, ընդ որում, պետք է լինի 3 նշանից ոչ ավելի: Մեկ նշանի առկայության դեպքում այն տեղադրվում է գրպանի կենտրոնում՝ շերտակարի վրա, երկուսի դեպքում՝ ծայրերին, երեքի դեպքում՝ հորիզոնական շարքով:



Պողպատագույն կիտելի վրա Մուգ մոխրագույն կիտելի վրա

Ոստիկանության ծառայողների համազգեստի վրա շքանշանների, մեդալների, շքանշանների ժապավենների և մեդալների ժապավենների և այլ տարբերանշանների շերտաձողի վրա տեղադրման և դասավորման կարգը:

Հավելված 2
ՀՀ ոստիկանության պետի
15 ապրիլի 2003 թ.
թիվ 5-Ն հրամանի

Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹԵՐ

Սույնով կարգավորվում է ոստիկանության ստորաբաժանումների, ոստիկանության ուսումնական հաստատությունների, ոստիկանության բժշկական հաստատությունների, ոստիկանության զորքերի, Հայաստանի Հանրապետության ոստիկանության կենտրոնական ապարատի անձնակազմի հանդերձանքի ապահովման կարգն ու պայմանները:

Հանդերձանքի տրամադրումն իր մեջ ընդգրկում է՝

- ստորաբաժանումներին համազգեստով, կոշկեղենով, հանդերձման պարագաներով, տարբերանշաններով և այլնով ապահովումը:
- տաք համազգեստի, պահակակետային հագուստի, անկողնային պարագաների, վրանների, հատուկ համազգեստի և կոշիկների, ինչպես նաև սպորտային համազգեստի տրամադրումը:

Ոստիկանության զորքերի, բժշկական և ուսումնական հաստատությունների հանդերձանքով և անկողնային պարագաներով ապահովումն իրականացվում է ոստիկանության տնտեսական վարչության միջոցով, իսկ բաշխումը, ըստ սահմանված նորմաների, կատարվում է ստորաբաժանման համապատասխան ծառայության կողմից:

Հանդերձանքի ապահովման ծառայության խնդիրներն են՝ ոստիկանության ստորաբաժանումների և ոստիկանության զորքերի անձնակազմին ժամանակին և ամբողջությամբ հանդերձանքով և անկողնային պարագաներով ապահովումը, ստորաբաժանումների հանդերձանքի պահեստներում և օգտագործման մեջ եղած համազգեստի հաշվառումը, պահպանման և խնայողության աշխատանքների իրականացումը, ոստիկանության ծառայողների համազգեստի կարի անհատական պատվերների կազմակերպումը, ինչպես նաև արտադրանքի որակի նկատմամբ հսկողությունը:

Համազգեստը ոստիկանության ստորաբաժանումներին տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թ. հոկտեմբերի 31-ի «Ոստիկանության ծառայողի համազգեստի նկարագիրը և այն կրելու ժամկետները սահմանելու մասին» թիվ 1753-Ն որոշման թիվ 2 հավելվածով սահմանված ժամկետներում:

Անձնական օգտագործման հանդերձանքի առարկաները անձնակազմին տրվում են անհատական օգտագործման համար: Համազգեստի գումարը վերականգնվում է միայն ոստիկանության ուսումնական հաստատություններից սովորողների հեռացման դեպքում:

Գույքային օգտագործման իրերը տրվում են ոստիկանության ստորաբաժանումներին ժամանակավոր անձնական կամ խմբակային օգտագործման համար:

Հանդերձանքը պատվիրվում և պահեստավորվում է կենտրոնացված կարգով ոստիկանության ստորաբաժանումների և ոստիկանության զորքերի հաստիքային կազմի հաշվարկով՝ հաշվի առնելով պահուստային պաշարները:

Պահեստում առկա՝ գործող նորմերին չհամապատասխանող հանդերձանքի բաշխումը կատարվում է ըստ նպատակահարմարության:

2. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ստորաբաժանմանը հանդերձանքի տրամադրման համար հիմք է հանդիսանում ստորաբաժանման ստեղծման մասին Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանը:

Ոստիկանության ստորաբաժանումներին հանդերձանքը բաշխվում է համաձայն ստորաբաժանման ղեկավարի կողմից հաստատված ցուցակի, իսկ ոստիկանության կենտրոնական ապարատի և ոստիկանության Երևան քաղաքի վարչության անձնակազմին՝ անհատական կարգով:

Ոստիկանության զորքեր, ոստիկանության ակադեմիա և այլ գերատեսչություններ տեղափոխման դեպքում ոստիկանության ծառայողին տրվում է հանդերձանքով ապահովման մասին համապատասխան ատեստատ:

3. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՀԱՄԱԶԳԵՍՏՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Համազգեստ ստանալու իրավունքից օգտվում են.

- Բարձրագույն, գլխավոր, ավագ և կրտսեր խմբի կոչումներ ունեցող և ոստիկանության որևէ խմբի պաշտոն զբաղեցնող ծառայողները կոչում ստանալու օրվանից,
- ոստիկանության ուսումնական հաստատությունների սովորողները՝ նշված հաստատությունում ուսումնառության ընդգրկվելու օրվանից:

Համապատասխան ուսադիրներ, տարբերանշաններ, թևքանշաններ և այլ պիտույքներ հատկացվում են հասանելիք համազգեստի հետ միասին:

Բարձրագույն խմբի կոչում ստացած ոստիկանության ծառայողները ապահովվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թ. հոկտեմբերի 31-ի «Ոստիկանության ծառայողի համազգեստի նկարագիրը և այն կրելու ժամկետները սահմանելու մասին» թիվ 1753-Ն որոշման թիվ 2 հավելվածի թիվ 1 նորմի ողջ լրակազմով:

Ոստիկանության կրտսեր խմբի կոչումներ ունեցող ոստիկանության ծառայողները, առաջին անգամ ստանում են ամենօրյա համազգեստի ողջ լրակազմը, իսկ տոնական համազգեստինը՝ 6 ամիս հետո:

Այլ պետությունների ոստիկանության ուսումնական հաստատություններ գործուղված սովորողների հանդերձանքի ապահովումը իրականացվում է ՀՀ ոստիկանության ուսումնական հաստատության համար նախատեսված նորմաներով՝ հաշվի առնելով տվյալ պետության բնակլիմայական առանձնահատկությունները:

Ընդհանուր օգտագործման տաք հագուստը, պահակակետային հագուստը, անկողնային պարագաները, վրանները, հատուկ հագուստը և կոշկեղենը հատկացվում են ստորաբաժանումներին որպես գույք:

4. ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ԵՎ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

Համազգեստի և հանդերձանքի հաշվառումը ոստիկանությունում իրականացնում է տնտեսական վարչության հանդերձանքի ծառայությունը, իսկ ստորաբաժանումներում՝ համապատասխան ծառայությունները, ընդունված ձևի փաստաթղթերով՝

- Հաշվառման քարտ (հավելված N 2.1)
- Ոստիկանության ծառայողների անհատական ամրակցման քարտ (հավելված N 2.2) (կազմման համար հիմք է հանդիսանում ոստիկանության կոչում շնորհելու մասին հրամանը)
- Ամրակցման քարտերի գրանցման մատյան (հավելված N 2.3)
- Ոստիկանության ծառայողի հանդերձանքի ապահովման ատեստատ (հավելված N 2.4)
- Ոստիկանության ծառայողի համազգեստի կարի անհատական պատվերի անդորրագիր (հավելված N 2.5)
- Ոստիկանության ծառայողի համազգեստի կարի անհատական պատվերի անդորրագրերի գրանցման մատյան (հավելված N 2.6)
- Մուտքի ապրանքագիր (հավելված N 2.7)
- Ելքի ապրանքագիր (հավելված N 2.8)
- Ապրանքագրերի գրանցման մատյան (հավելված N 2.9)
- Մուտքի ապրանքագրերի գրանցման մատյան (հավելված N 2.10)
- Բաշխման ամփոփագիր (հավելված N 2.11)
- Բաշխման ամփոփագրերի գրանցման մատյան (հավելված N 2.12)
- Գույքի տարեկան բաշխման մատյան (հավելված N 2.13)
- Ամսական մնացորդի հաշվառման մատյան (հավելված N 2.14):

Հավելված 2.1

Պետ_____

__ _____200 թ.

ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՐՏ N ___

_____

ապրանքի անվանումը

_____

Գինը_____Չափի միավ._____

Ամսաթիվ	Փաստաթղթի համարը	Մատակարար կազմակերպության անվանումը	մուտք	ելք	մնացորդ	Ծանոթ.

		Տեղափոխված է....				

Հավելված 2.2
Չափերը

ԱՄՐԱԿՑՄԱՆ ՔԱՐՏ N ____

Պետ_____
Ազգանուն, անուն, հայրանուն
Նշումներ՝ տեղափոխման պարտավորությունների
երկարացման և կոչման մասին
_____
_____
_____

կոչում_____
պաշտոն_____
ընդունված է ____200 թ. N ____
ազատված է ____200 թ. N ____
անձնական N _____

հասակ_ _____
կրծքավանդակի չափ____
կիտել, տաբատ_____
գլխարկ _____
վերնաշապիկ_____
կոշիկ _____

N	Հանդերձանքի առարկաների անվանումը	Նախնական տվյալները		ՏՐՎԱԾ Է																	
				200 թ.			200 թ.			200 թ.			200 թ.			200 թ.			200 թ.		
		ամսա-թիվ	քա-նակ	ամսա-թիվ	քա-նակ	փաս-տա-թղթի N	ամսա-թիվ	քա-նակ	փաս-տա-թղթի N	ամսա-թիվ	քա-նակ	փաս-տա-թղթի N	ամսա-թիվ	քա-նակ	փաս-տա-թղթի N	ամսա-թիվ	քա-նակ	փաս-տա-թղթի N	ամսա-թիվ	քա-նակ	փաս-տա-թղթի N
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.	12.	13.	14.	15.	16.	17.	18.	19.	20.	21.	22.
	Կրման նորմայով նախատեսված տեսականու անվանումը																				

Քարտում նշված տեսականիների քանակները և ստացման ժամկետները հաստատում եմ,
հանդերձանքի ատեստատ N._____ տրված ___ _____200 թ. ստացա _____

1. «Ամսաթիվ» սյունակում գրանցվում են հասանելիք տեսականիների ստացման ամիսը
2. Դրամական փոխհատուցման դեպքում «քանակ» սյունակում գրանցվում են.

համարիչում՝ տեսականիների քանակը, հայտարարում՝ փոխհատուցման գումարը:

Հավելված 2.3

ՄԱՏՅԱՆ N ___

ԱՄՐԱԿՑՄԱՆ ՔԱՐՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ

Ամրակցման քարտի N	Ազգանուն, անուն, հայրանուն	Կոչումը, պաշտոնը	Հրամանի N ամսաթիվ	Ազատման հրամանի N, ամսաթիվ	Ծանոթություն
1.	2.	3.	4.	5.	6.

Հավելված 2.4

Համազգեստի չափսերը
Գլխարկ_____
Կիտել, տաբատ _____
Վերնաշապիկ _____
Կոշիկ _____

ԱՏԵՍՏԱՏ N ___

ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ

Տրվում է _____
Ազգանուն, անուն, հայրանուն
_____
կոչումը, պաշտոնը

Հիմքը՝ հրաման N _____ ___ _____ 200 թ.
_____
Ստորաբաժանում

Անձնական N _____

Հ/Հ	Հանդերձանքի անվանումը	Քանակը (տառերով)	Տրման ժամանակը ամիսը, տարին (տառերով)	Նշումներ
1.	2.	3.	4.	5.

Ատեստատի թերթիկում նշված հանդերձանքը _____հատ
տառերով
և տրման ժամկետները նշված են ճիշտ

Հանդերձանք ստացողի ստորագրությունը _____
Կ.Տ. Պետ_____
Տեսուչ (հաշվապահ)_____

___ _____200 թ.

Հավելված 2.5

Օրդերն ուժի մեջ է մինչև _____200 թ.
Անդորրագիր N _____
Համազգեստի կարի անհատական պատվերի

_____
ստորաբաժանումը
_____
կոչում, ազգանուն, անուն, հայրանուն
Հասակը _____կրծքավանդակի չափը_____
_____

Համազգեստի անվանումը	Ծանոթություն

Տնտեսական վարչության պետ _____

____ _____200 թ.

Պատվեր N ___ ձևակերպված է ___ _____200 թ. _____
արտադրամասի ընդունողի ստորագրությունը
Պատրաստի համազգեստն ստացա _____
ստորագրություն, վկայականի N
___ _____200 թ.

Հավելված 2.6

ՄԱՏՅԱՆ N ___

ԿԱՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ԱՆԴՈՐՐԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Կոչում	Ստորա-բաժա-նումը	Կիտել տաբատ ամենօրյա	Տաբատ ամենօրյա	Գլխարկ	Կիսա-շրջա-զգեստ	Կիտել կիսա-շրջա-զգեստ		Տրման ժամա-նակը	Ստորագ.	Նշում-ներ
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10,11,12,13	14.	15.	16.

Հավելված 2.7

ՄՈՒՏՔԻ ԱՊՐԱՆՔԱԳԻՐ N _____

___ _____200 թ.

1. Պահեստապետ_____
2. Ընդունել _____
3. Ում միջոցով _____
4. Հիմք _____

N	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակը		Գինը (դրամ)	Գումարը (դրամ)	Ծանոթություն
			ենթակա է ընդունման	ընդունվել է			

Վարչության պետ
Բաժնի (բաժանմունքի) պետ
Տեսուչ (հաշվապահ)

Հանձնեց
Ընդունեց

Հավելված 2.8

ԱՊՐԱՆՔԱԳԻՐ N _____

___ _____200 թ.

_____
ստորաբաժանումը
_____
ում համար, պաշտոնը, կոչումը
_____
ում միջոցով, պաշտոնը, կոչումը
_____

Հ/Հ	Կոդը	Հանդերձանքի (ապրանքի) անվանումը	Չափի միավոր	Գինը (դրամ)	Հատկացված է		Փաստացի ստացված է	
					քանակը	գինը (դրամ)	քանակը	գինը (դրամ)

վարչության պետ
բաժնի (բաժանմունքի) պետ
տեսուչ (հաշվապահ)

Բաց թողեց
Ստացավ

Հավելված 2.9

ՄԱՏՅԱՆ N _____

ԱՊՐԱՆՔԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ

Ապրանքագրի N	Ստորաբաժանումը	Ամսաթիվ	Ծանոթություն
	2.	4.	5.

Հավելված 2.10

ՄՈՒՏՔԻ ԱՊՐԱՆՔԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ

ՄԱՏՅԱՆ

Հ/Հ	Մուտքի համարը	Որտեղից է ստացվել	Հանդերձանքի անվանումը	Քանակը	Ծանոթություն
1.	2.	3.	4.	5.	6.

Հավելված 2.11

Անձնակազմի հաշվառման տվյալների
հետ ստուգված է _____
ստորագրություն

ԲԱՇԽՄԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

___ _____ 200 թ.

Ապրանքագիր N _____ ___ _____ 200 թ.

_____
ստորաբաժանման անվանումը

N.	Ազգանուն, անուն, հայրանուն	Կոչումը	Ամրակցման քարտի N	Չափերը										Լրացվում է ստացողի կողմից		
				գլխարկի	համա-զգեստի	կոշիկի	վերնա-շապիկի							Վկայականի N	Ստացված ապրանքների ընդհանուր քանակը	Ստացողի ստորա-գրությունը
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.	12.	...	56.	57.	58.	59.

1. Ամփոփագիրը ենթակա է հետ վերադարձման տնտեսական վարչություն մեկամսյա ժամկետում
2. Բաշխման ժամանակ այն հանդերձանքը, որը չի տրվել, վերցվում է օղակի մեջ
3. 9-56 կետը՝ նորմայով նախատեսված հանդերձանքի տեսականու անվանումները

Վարչության պետ _____
Բաժանմունքի պետ_____
Տեսուչ (հաշվապահ)_____

Բաշխումը կատարեց_____

____ _____200 թ.

Հավելված 2.12

ՄԱՏՅԱՆ N _____

ԲԱՇԽՄԱՆ ԱՄՓՈՓԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ

Ամփոփագրի N	Ստորաբաժանումը	Ամսաթիվ	Ծանոթություն
	2.	4.	5.

Հավելված 2.13

ԳՈՒՅՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՇԽՄԱՆ

ՄԱՏՅԱՆ

Հ/Հ	Ստորաբաժանման անվանումը	Գույքի անվանումը			Ծանոթություն
		Ապրանքագրի N	Ամսաթիվը	Քանակը	

Հավելված 2.14

ԱՄՍԱԿԱՆ ՄՆԱՑՈՐԴԻ ՄԱՏՅԱՆ N_____

Մուտքի
Հանդերձանքի ապահովման բաժանմունքի փաստաթղթերի
Ելքի

Հ/Հ	Ստորաբաժանման անվանումը	Հաշվառման քարտերի համարները																			
	Ընդամենը																				

___ _____200 թ. Կազմեց_____

Հավելված 3
ՀՀ ոստիկանության պետի
15 ապրիլի 2003 թ.
թիվ 5-Ն հրամանի

ՀԱՏՈՒԿ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՀԱՄԱԶԳԵՍՏ ԿՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ
(ՆՈՐՄԱ 5)

Հ/Հ	Անվանումը	Քանակը	Կրելու ժամկետը (տարի)	Ծանո-թու-թյուն
1	2	3	4	5
1.	Բաճկոն և տաբատ (սև գույնի, գունաքողարկված) տաքացված	1 լրզմ	3	1,2
2.	Ձմեռային սպորտային սև գլխարկ	1 հատ	2	1,2
3.	Ձմեռային քողարկող խալաթ	1 հատ	5	1
4.	Համազգեստ ամառային սև (վերնաշապիկ, տաբատ, ժիլետ)	1 լրզմ	1	1,2
5.	Ամառային գունաքողարկող խալաթ	1 հատ	5	1
6.	Բերետ (սև, գունաքողարկված)	1 հատ	2	1
7.	Դիմակ սև	1 հատ	1.5	1
8.	Մայկա կարճաթև (սև, գունաքողարկված)	2 հատ	1	1,2
9.	Հատուկ բարձրասրունք կոշիկ	1 զույգ	1	1
10.	Ձեռնոց կաշվե, կիսաբաց մատներով	1 զույգ	3	1
11.	Սվիտեր	1 հատ	3	1
14.	Շնավարժի բաճկոն-տաբատ բամբակյա	լրակազմ	2	3
15.	Շնավարժի թևքեր բամբակյա	1 զույգ	2	3
16.	Խալաթ կիսաբամբակյա	1 հատ	2	3
17.	Կոմբինեզոն կիսաբամբակյա	1 հատ	2	3
18.	Երկարաճիտք հատուկ կոշիկներ	1 զույգ	3	3
19.	Ձեռնոց կիսաբամբակյա ձմեռ.	1 զույգ	1	3
20.	Ձեռնոց բրեզենտե	1 զույգ	1	3
21.	Անձրևանոց բրեզենտե	1 հատ	5	3

Հատուկ ստորաբաժանումների մեջ մտնում են.
1. Ոստիկանության հատուկ նշանակության ստորաբաժանումներ
2. Ոստիկանության տրանսպորտային վարչության ուղեկցող վաշտ
3. Շնաբուծարան

Հավելված 4
ՀՀ ոստիկանության պետի
15 ապրիլի 2003 թ.
թիվ 5-Ն հրամանի

ՀԱՏՈՒԿ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ ՊԱՐԵԿԱՊԱՀԱԿԵՏԱՅԻՆ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏ ԿՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ
(ՆՈՐՄԱ 6)

Հ/Հ	Անվանումը	Քանակը	Կրելու ժամկետը (տարի)	Ծանո-թու-թյուն
1	2	3	4	5
1	Մուշտակ, կիսամուշտակ	1 հատ	7	3
2	Տաբատ ձմեռային	1 հատ	2	
3	Անձրևանոց գլխարկածածկոցով	1 հատ	3	
4	Կոստյում արհեստական կաշվից (բաճկոն, տաբատ)	1 լրզմ	5	1

5	Տաբատ (գալիֆե)	1 հատ	2	1
6	Երկարաճիտք կաշվե կոշիկ	1 զույգ	2	1
7	Երկարաճիտք կաշվե կոշիկ մորթե ներդիրով	1 զույգ	2	1, 2
8	Լուսաանդրադարձնող հանդերձում	1 լրզմ	3	3
9	Հանդերձում սպիտակ	1 լրզմ	3	1
10	Սաղավարտ սպիտակ, ակնոցներով	1 լրզմ	5	1, 3
11	Սաղավարտի ներդիր	1 հատ	3	1
12	Սպիտակ ձեռնոց լայնաբերան, բազկապաններով, ձմեռային	1 զույգ	2	1
13	Ձեռնոց սև, կաշվե, կիսաբաց մատներով	1 զույգ	3	1
14	Անջրանցիկ գլխարկածածկոց	1 հատ	3	

1. Պետավտոտեսչության վարչության, ճանապարհապարեկային ծառայություն հատուկ վաշտ
2. Ճանապարհապարեկային ծառայություն, պարեկապահակետային ծառայություն լեռնային և բարձր լեռնային գոտիների ծառայողների
3. Հատկացվում է որպես գույք:

Հավելված 5
ՀՀ ոստիկանության պետի
15 ապրիլի 2003 թ.
թիվ 5-Ն հրամանի

ԱՆԿՈՂՆԱՅԻՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ (ՈՐՊԵՍ ԳՈՒՅՔ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ
(ՆՈՐՄԱ 7)

Հ/Հ	Անվանում	Քանակ	Օգտագործելու ժամկետը	Ծանո-թություն
1.	Բամբակյա բարձ	1 հատ	4 տարի	
2.	Բամբակյա ներքնակ	1 հատ	4 տարի	
3.	Բամբակյա բարձի երես	2 հատ	2 տարի	
4.	Բամբակյա սավան	4 հատ	2 տարի	
5.	Կիսաբրդյա կամ բայկայե ծածկոց	1 հատ	4 տարի	5
6.	Բամբակյա սրբիչ	3 հատ	2 տարի	
7.	Բամբակյա ծածկոց	1 հատ	6 տարի	4
8.	Սրբիչ բաղնիքի	1 հատ	1 տարի	4

Նշված ժամկետները տարածվում են՝
1. Ոստիկանության ուսումնական հաստատությունների,
2. Ձերբակալվածներին պահելու վայրերի և ոստիկանության հատուկ ընդունիչ կայանների,
3. Բամբակյա սավանը, բամբակյա բարձի երեսը և բամբակյա սրբիչը տրվում են 1 մահճակալին 4 հատի հաշվարկով,
4. Տրվում է ոստիկանության ուսումնական հաստատություններին,
5. Ոստիկանության ուսումնական հաստատությունների սովորողներին տրվում է 5 տարով:

Հավելված 6
ՀՀ ոստիկանության պետի
15 ապրիլի 2003 թ.
թիվ 5-Ն հրամանի

Կ Ա Ր Գ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ, ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԵՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՁՈՐՔԵՐԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ԱՎԱԳ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱՐԻ ՊԱՏՎԵՐՆԵՐԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Համազգեստի անհատական կարի պատվերն իրականացվում է կարի արտադրամասերի կողմից՝ պայմանագրային հիմունքներով:
1.2 Համազգեստի անհատական կարի պատվերի թույլտվության անդորրագրերն ըստ հասանելիքի տրվում է միայն տնտեսական վարչության կողմից, որն իրականացնում է համազգեստի հատկացման հաշվառում: Հատկացման պահին անհատական ամրակցման քարտում կատարվում են համապատասխան նշումներ:
1.3 Ոստիկանության առանձին ստորաբաժանումների ծառայողներին անդորրագրեր կարող են ուղարկվել ապրանքացուցակի հետ միասին և հատկացվել ստորագրության միջոցով:
1.4 Անդորրագրեր կարող են հատկացվել հասանելիության ժամկետի լրանալուց 2 ամիս առաջ:
1.5 Յուրաքանչյուր համազգեստի անհատական կարի պարտվերի համար ձևակերպվում է առանձին անդորրագիր, կիտելի և տաբատի միաժամանակյա պատվերի դեպքում՝ ձևակերպվում է մեկ անդորրագիր:
1.6 Անդորրագիր ստացած աշխատակիցը մեկ ամսվա ընթացքում այն ներկայացնում է կարի արտադրամաս: Նշված ժամկետը պատվիրատուի կողմից լրանալու դեպքում պատվերը կատարվում է կարի արտադրամասին հարմար ժամկետներում:
1.7 Անհատական կարի պատվերի անդորրագրերը տրվում են ավագ և կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող ոստիկանության այն ծառայողներին, որոնց չափսերը չեն համապատասխանում պատրաստի հանդերձանքի ստանդարտով նախատեսված չափսերին:
1.8 Պատվերի կատարման և չափափորձման ժամանակը որոշվում է կարի արտադրամասի կողմից, միևնույն ժամանակ համազգեստը կարելու ժամկետը չպետք է գերազանցի 60 օրը:
1.9 Պատրաստի համազգեստը պատվիրողն ստանում է 30 օրվա ընթացքում: Ծառայողի կողմից պատրաստի համազգեստը չստանալու մասին կարի արտադրամասը տեղեկացնում է ՀՀ ոստիկանության տնտեսական վարչությանը:
1.10 Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում համազգեստը չստանալու դեպքում այն մուտքագրվում է տնտեսական վարչության պահեստ՝ պլանային բաշխման նպատակով:
1.11 Պատվիրված համազգեստը և նրա առանձին տարրերը պետք է համապատասխանեն տվյալ տեսակի համազգեստին ներկայացվող պահանջներին: Հայտնաբերված թերությունները վերացվում են կարի արտադրամասի կողմից անվճար:
2. Համազգեստը կարվում է գործող տեխնիկական պայմաններին բավարարող կտորեղենից:
Համազգեստը պատվիրատուին հանձնվում է ուսադիրներով և տարբերանշաններով:
Կարի արտադրամասը կատարված պատվերների մասին հաշվետվությունները ներկայացնում է ՀՀ ոստիկանության ֆինանսատնտեսագիտական վարչությանը՝ ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության համապատասխան ծառայությունների միջոցով: